Հաստատվել է Հորբատեղի հիմնական դպրոցի
մանկավարժական խորհրդի 2023թ-ի օգոստոսի 23-ի նիստում

Հաստատում եմ՝ դպ.տնօրեն Digitally signed by SARGSYAN MIKAYEL 2911620011 Մ.Սարգսյան

ՀՀ Վայոց ձորի մարզի Հորբատեղի Հիմնական դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

Պլանը կազմելիս հաշվի է առնվել դպրոցի հնարավորությունները՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսները, համայնքի առանձնահատկությունները: Աշխատան-քային պլանը քարացած չէ և որոշ հարցեր ուսումնական տարվա ընթացքում կարող են կորցնել իրենց սրությունը, նրանց փոխարեն կոլեկտիվի կողմից կարող են առաջ քաշվել այլ հրատապ հարցեր, որը կբերի պլանի ընթացիկ թարմացման:

Աշխատանքային պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Հիմնական պարտադիր կրթության իրականացում:
2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:
3. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ:
4. Ներդպրոցական վերահսկողություն:
5. Աշխատանք ծնողների հետ, աշակերտական խորհուրդ:
6. Ֆինանսատնտեսական գործունեություն:

1. Հիմնական պարտադիր կրթության իրականացում:

1. Կատարել բնակավայրում հաշվառված 6-ից 14 տարեկան երեխաների հաշվառում՝ նրանց ընդգրկելով ուսման մեջ:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի օգոստոսի 20-ից 31-ը:
   Կատարողներ՝ տնօրեն և զինղեկ:

2. Դասարանների կազմավորում՝ կոմպլեկտավորում /համակազմ/:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի օգոստոսի 20-ից 31-ը:
   Կատարող՝ տնօրեն :

3. Առաջին դասարանցիների գործերի ընդունում:
   Կատարման ժամկետը՝ մինչև 2023թ-ի սեպտեմբերի 1-ը :
   Կատարողներ՝ տնօրեն և դասվար:

4. Աշխատանք տանել, որ ոչ մի երեխա դուրս չմնա հանրակրթությունից:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա սկզբին:
   Կատարողներ՝ տնօրեն , զինղեկ ,դասղեկ-դասվարներ:

5. Ստեղծել պայմաններ սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա սկզբին:
   Կատարողներ՝ տնօրեն , դասղեկ-դասվարներ:

6. Խիստ հսկողություն սահմանել ուշացող և անհարգելի բացակայող աշակերտների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , զինղեկ, դասղեկ-դասվարներ :

7. Առանձնակի ուշադրություն դարձնել դժվար առաջադիմող աշակերտներին:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , դասղեկ-դասվարներ:

8. Դպրոցի 1-ից 4-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել դպրոցական սնունդ՝ << Սնունդ ծրագրի>> շրջանակներում:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ դասվարներ, ծնողներ, ծրագրի պատասխանատու :

9. Ներառական կրթության դպրոցական մակարդակի ակտիվացում: Ուսուցչի օգնականի պոտենցիալի օգտագործում:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարող՝ տնօրեն , ուսուցչի օգնական:

2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:

1. Ուսումնական պլանի կազմում, հաստատում, ուսումնական ծրագրերով ապահովում:
   Կատարման ժամկետը՝ մինչև ուս. տարվա սկզբը:
   Կատարող՝ տնօրեն :

2. Վարձավճարով տրվող դասագրքերի բաշխում և դասագրքերով ապահովում՝ այլ դպրոցներից դասագրքերի հայթայթում և տրամադրում:
   Անվճար դասագրքերից օգտվող աշակերտների ցուցակի հաստատում:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա սկզբին:
   Կատարողներ՝ տնօրեն , գրադարանավար ,դասղեկ-դասվարներ:

3. Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել փոխադարձ դասալսումներ և արդյունքները քննարկել տնօրենի կից խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդի նիստերում:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , ուսուցիչներ:

4. Կազմակերպել շախմատի օլիմպիադա:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , շախմատի ուսուցիչ:

5. Կազմակերպել առարկայական օլիմպիադաներ:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , առարկայի ուսուցիչներ:

6. Ուսումնասիրել դասավանդվող առարկաների դասավանդման վիճակը, արդյունքները քննարկել տնօրենի կից խորհրդակցություններում, մանկա-վարժական խորհրդի նիստերում:
   Կատարման ժամկետը՝ 2024թ-ի ապրիլ-մայիս:
   Կատարողներ՝ տնօրեն , առարկայի ուսուցիչներ:

7. Հատուկ ուշադրություն դարձնել 2-9-րդ դասարաններում գիտելիքների ստուգման՝ ծրագրերի կատարման և դրանց յուրացման որակին:
   Կատարման ժամկետը՝ 2024թ-ի փետրվար:
   Կատարողներ՝ տնօրեն , առարկայի ուսուցիչներ:

8. Ուշադրության կենտրոնում պահել 1-ին դասարանցիների ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը՝ ապահովել անհրաժեշտ պայմաններ նրանց ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարող՝ տնօրեն :

Դաստիարակությունը և ուսուցումը գտնվում են սերտ կապի մեջ: Սակայն դաստիարակությունը, ինչպես նաև ուսուցումը միայն դասով չի սահմանափակվում, այն շարունակվում է արտադասարանական աշխատանքների միջոցով:

1. Առաջին ուսումնական օր:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբերի 1-ին:
   Կատարողներ՝ տնօրեն , դասղեկ-դասվարներ:

2. Դասղեկ-դասվարների աշխատանքային պլանի կազմում:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 5-ը:
   Կատարողներ՝ դասղեկ-դասվարներ:

3. Կազմակերպել միջոցառումներ նվիրված ՀՀ անկախությանը՝ <<Անկախության օր>>:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբերի 21-ին:
   Կատարողներ՝ տնօրեն , զինղեկ, դասղեկ-դասվարներ:

4. Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ մարզի և հանրապետության տարբեր վայրեր, հանդիպումներ այլ դպրոցների սովորողների հետ:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարող՝ տնօրեն , դասղեկ-դասվարներ, ծնողական խորհուրդ:

5. Սովորողների համար կազմակերպել զրույց-քննարկումներ՝ տվյալ պահի համար պահանջվող թեմաներով:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն, դասղեկ-դասվարներ:

6. Կազմակերպել միջոցառում՝ ուսուցչի օր:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի հոկտեմբեր:
   Կատարողներ՝ տնօրեն ,մանկավարժներ:

7. Կազմակերպել համադպրոցական միջոցառում նվիրված Ամանորին:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի դեկտեմբերի վերջ:
   Կատարող՝ տնօրեն , դասղեկ-դասվարներ, ծնողական խորհուրդ:

8. Կազմակերպել բժշկական և իրավական թեմաներով զրույցներ, այցելել N զորամաս:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ զինղեկ, գրադարանավար, հրավիրված բուժաշխատող:

3. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ:

1. Նշանակել դասղեկ-դասվարներ, խմբակավարներ:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 1-ը:
   Կատարող՝ տնօրեն :

2. Հաստատել դասղեկ-դասվարների՝ աշխատանքային, ուսուցիչների՝ թեմատիկ պլանները:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբեր:
   Կատարող՝ տնօրեն :

3. Փոխադարձ դասալսումների միջոցով ակտիվացնել ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառումը դպրոցում:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն , ուսուցիչներ:

4. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին և նրանց ընդգրկել վերապատրաստման և հերթական ատեստավորման գործընթացին:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարող՝ տնօրեն :

5. Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳ նախարարության հրահանգներին, հրամաններին և նորմատիվ ակտերին:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարող՝ տնօրեն :

Այս բաժնում նաև պլանավորվել է մանկավարժական խորհրդի գործունեությունը:Նախատեսված է գումարել ուս. տարվա ընթացքում առնվազն 4-ից 5 նիստ՝ երկամսյա պարբերականությամբ: Օրակարգի հարցերը կձևավորվեն նիստից-նիստ ընկած ժամանակահատվածում: Անհրաժեշտության դեպքում նիստերի քանակը կարող է գերազանցել սահմանված քանակը: Մանկավարժական խորհրդի նիստերում կքննարկվեն դպրոցի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության, կոմպլեկտավորման, ուսումնական պլանի, դասաբաշխման, , դասարանից-դասարան փոխադրման, ավարտական և պետական քննությունների, բացակայությունների, ավարտական փաստաթղթի տրամադրման, գովասանագրերով պարգևատրման, դպրոցից ազատման և ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:

4. Ներդպրոցական վերահսկողություն:

Վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկն է: Այստեղ ամենակարևորը աշակերտների հետ զրույցներն են, դասալսումները, ուսուցիչների աշխատանքային պլանների, սովորողների տետրերի և այլ փաստաթղթերի ստուգումները, ինչպես նաև քննությունների արդյունքները:

1. Ստուգել ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորման վիճակը ուսումնական առարկաներից:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 15-ը:
   Կատարող՝ տնօրեն :

2. Ստուգել ընթերցանության վիճակը տարրական դպրոցում՝ 2-րդ-ից 4-րդ դասարաններում:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի հոկտեմբեր:
   Կատարող՝ տնօրեն:

3. Ստուգել աշակերտների գիտելիքները հանրահաշվից և երկրաչափությունից միջին դպրոցում՝ 9-րդ դասարանում:

Կատարման ժամկետը՝ 2023թ-ի նոյեմբեր:
Կատարող՝ տնօրեն:

4. Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում:
Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
Կատարողներ՝ դասղեկ-դասվարներ:

5. Գրավոր աշխատանքների քանակի և որակի ստուգում:
Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
Կատարող՝ տնօրեն :

6. Ստուգել Էլ.դասամատյանների, աշակերտական տետրերի, էլ. օրագրերի, վարձույթով տրված դասագրքերի վարման վիճակը:
Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
Կատարողներ՝ տնօրեն, գրադարանավար :

7. Վերահսկողություն իրականացնել ուսուցիչների emis.am-ի գրանցումների ճիշտ կազմակերպմանը:
Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
Կատարողներ՝ տնօրեն

8. Ստուգել աշակերտների գիտելիքները հայոց լեզվից և գրականությունից միջին դպրոցում՝ 9-րդ դասարանում:
Կատարման ժամկետը՝ 2024թ-ի փետրվար:
Կատարող՝ տնօրեն:

9. Ստուգել գիտելիքների և հմտությունների վիճակը տարրական դպրոցում՝ 2-րդ-ից 4-րդ դասարաններում:
Կատարման ժամկետը՝ 2024թ-ի մարտ:
Կատարող՝ տնօրեն:

10. Վերահսկողություն սահմանել դպրոցական ռեժիմի ճիշտ կազմակերպմանը:
Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
Կատարողներ՝ տնօրեն, զինղեկ :

11. Ստուգել 4-րդ և 9-րդ դասարանների աշակերտների տարեկան և քննական գնահատականների համապատասխանությունը:

Կատարման ժամկետը՝ ուս. տարվա վերջին:
Կատարող՝ տնօրեն :

5. Աշխատանք ծնողների հետ, աշակերտական խորհուրդ:

1. Հրավիրել համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ, ընտրել նախագահներ, անհրաժեշտության դեպքում՝ թարմացնել կազմը:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբեր:
   Կատարողներ՝ տնօրեն, դասղեկ-դասվարներ:

2. Հրավիրել ծնողական խորհրդի նիստ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա խնդիրները՝ արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների հետ կապված:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբեր:
   Կատարողներ՝ տնօրեն, դասղեկ-դասվարներ, ծնողական խորհուրդ :

3. Աշխատանքներ տանել տարբեր աղանդների դեմ, կազմակերպել անկնունք երեխաների, ինչպես նաև ծնողների մկրտություն:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն, ծնողական խորհրդի նախագահ , դասղեկ- դասվարներ, Հայ առաքելական եկեղեցու սպասավոր:

4. Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ դասղեկ-դասվարներ:

5. Ծնողներին ներգրավել տարրական դասարանների աշակերտների սնունդ ծրագրի իրականացման գործընթացին:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն, դասղեկ-դասվարներ:

6. Կազմակերպել փոքրիկ էքսկուրսիաներ համայնքի տարածքում գտնվող պատմամշակույթային հուշարձաններ, եկեղեցիներ:
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ զինղեկ, դասղեկ-դասվարներ:

6. Ֆինանսատնտեսական գործունեություն:

1. Կազմավորել դպրոցի դասարանները/համակազմը/՝ հաշվի առնելով ընթացիկ ֆինանսական տարվա հնարավորությունները:
   Կատարման ժամկետը՝ մինչև 2023թ-ի սեպտեմբերի 5-ը:
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ :

2. Կազմել դպրոցի Տարիֆիկացիոն ցուցակը, քննարկել դպրոցի կառավարման խորհրդի նիստում և ներկայացնել լիազոր մարմնի հաստատմանը:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբեր, 2024թ-ի հունվար:
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ, տարիֆիկացիոն հանձնաժողով :

3. Կազմել դպրոցի 2023թ-ի փոփոխված բյուջեի ծախսերի նախահաշիվը, այն քննարկել դպրոցական խորհրդի նիստում, միաժամանակ տալով կատարված ծախսերի ընթացիկ հաշվետվություն, և այն ներկայացնել լիազոր մարմնի հաստատմանը:
   Կատարման ժամկետը՝ մինչև 2023թ-ի դեկտեմբերի 25-ը :
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ :

4. Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած հիմնական և շրջանառու միջոցների հաշվառում:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի հոկտեմբեր-դեկտեմբեր :
   Կատարողներ՝ գույքագրման հանձնաժողով, հաշվապահ :

5. Կազմել դպրոցի 2024թ-ի բյուջեի նախագծի նախնական տարբերակը, այն քննարկել բոլոր շահառու խմբերում, առաջարկությունների հիման վրա կազմել բյուջեի նախագիծ և այն քննարկել դպրոցի կառավարման խորհրդի նիստում:
   Կատարման ժամկետը՝ 2023թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր :
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ :

6. Կազմել դպրոցի 2024 ֆինանսական տարվա ծախսերի նախահաշիվը, այն քննարկել դպրոցի կառավարման խորհրդի նիստում, միաժամանակ տալով ընթացիկ տարվա կատարված ծախսերի հաշվետվություն, և փաստաթուղթն իր համապատասխան հավելվածներով ներկայացնել լիազոր մարմնի հաստատմանը/եթե գործընթացը չլինի էլեկտրոնային եղանակով/:
   Կատարման ժամկետը՝ մինչև 2024թ-ի մարտի 15-ը :
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ :

7. Հետևելով ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներին և պարտադիր կատարման ենթակա ֆինանսական բնույթի ակտերին՝ ապահովել դրանց ժամանակին կատարումը (սոց. փաթեթ, պարտադիր կուտակային համակարգ, նվազագույն աշխատավարձ և այլն):
   Կատարման ժամկետը՝ ուս. տարվա ընթացքում:
   Կատարողներ՝ տնօրեն, հաշվապահ :